

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ

ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

«\_\_» \_\_\_\_\_ 2013թ. N\_\_-Ն

«\_\_» \_\_\_\_\_ 2013թ. N\_\_-Ն

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի  
մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37 կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ.

1. Հաստատել ընդերքօգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության  
մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը՝  
համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ

ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

\_\_\_\_\_ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

\_\_\_\_\_ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ՀՀ փոխվարչապետ, տարածքային

կառավարման նախարարի

2013 թվականի -ի

թիվ -Ն

և ՀՀ էներգետիկայի և բնական

պաշարների նախարարի

2013 թվականի -ի

թիվ -Ն

համատեղ հրամանով

Վարչական Հսկողության Հարցաշար  
Ընդերքօգտագործման բնագավառ

1. Գործառույթը՝

- 1) ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ծրագրի համաձայնեցում,
- 2) համայնքի ավագանու որոշման հիման վրա, ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագրի կնքում,
- 3) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պահանջվող հողամասի (հողամասերի) նպատակային նշանակության փոփոխման համար որոշման կայացում,

4) ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ՝ հողերի օգտագործման մասին որոշման կայացում:

2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝

1) Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս,

2) ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մաս և 83-րդ հոդվածի 1-ին մաս,

3) <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենք,

4) ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետեր,

5) ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2011թ. դեկտեմբերի 30-ի N249-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի 5-րդ և 6-րդ կետեր:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
<p>1. Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ և օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 750-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան կազմված և համաձայնեցման ներկայացված ծրագրին՝ հավանություն</p>						

տալու համար 2-ամսյա ժամկետի պահպանում						
2.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագրի կնքման նպատակով համայնքի ավագանու որոշման կայացման համար 2-ամսյա ժամկետի պահպանում						
3.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց դիմումի հիման վրա՝ համայնքի ավագանու որոշման առկայության դեպքում, համայնքի ղեկավարի կողմից հողօգտագործման պայմանագրի կնքման համար 10-օրյա ժամկետի պահպանում	15.05.2003թ. Պայմանագրի գրանցման N 757 վարձակալ. հողատարածքի չափը՝ 5,25 հա արժեքը՝ 14440 դրամ					
4.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց դիմումի հիման վրա՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պահանջվող հողամասի (հողամասերի) նպատակային նշանակության փոփոխման համար որոշման կայացման 5-օրյա ժամկետի պահպանում						
5.Ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ՝ հողերի օգտա-						

գործման մասին տեղական համայնքի որոշման կայացման համար 2-ամսյա ժամկետի պահպանում						
---	--	--	--	--	--	--